

րացեալք էին եւ քաջալերեալք՝ խրախալից մտաւք փառաւորեր զՓրկիչն ամենեցուն զտեր Յիսուս Քրիստոս:

5 Եւ հասեալք ի ժամ մարտին՝ հայեցեալ տեսանէին ըստ արիևի կարգման նկատելոյ զգունդան Պարսից: 6 Կարգեր եւ զիւր գունդն երանելի զաւրավարն Յայոց Վարդան, ըստ բաւականին այրուծիոյն իւրոյ, ընդդէմ Նոցա. յերիս առաջս¹ բաժանեալ՝ տայր ի ձեռս իւրաքանչիւր զաւրագլխի. որում աջոյ կողմանն կացուցաներ զաւրագլուխ զիշխանն Արշարունեաց զԱրշաւիր Կամսարականն, որ էր եւ փեսայ զաւրավարին Յայոց սրբոյն Վարդանայ տեառնն Մամիկոնեից, ունելով զդուստր Նորա ի կնութեան. եւ Նիզակակից տայր Նմա զՄուշ զաւագ սեպուհ՝ յազգէն Դիմաքսենից. եւ զահեակ կողմն տայր ի ձեռն խորենայ խորխոռունւոյ, եւ զաւրավիզն ընդ Նմա կացուցաներ զՅմայեակ Դիմաքսեանն. եւ ինքն սուրբ զաւրավարն Յայոց Վարդան պատրաստեր զինքն միջոյ տեղւոյն յարծակման: 7 Եւ այսպէս յարինեալ զճակատն եւ յԱստուծոյ ինսաման ապաւինեալք՝ յարծակեցան ի վերայ թշնամեացն:

8 Յորս Նախագոյն յառաջեալ ի տեղի մարտին՝ Կամսարականն Արշաւիր եւ Մուշ սեպուհն Դիմաքսենից, որք յանգիտութենէ տեղեացն՝ դիպեցան թանձրախոր սաստիկ մաւրից. Կամսարականն Արշաւիր եւ Մուշ ի յառաւելապէս դիմեցմանէն երիվարացն՝ անկեալք ի տիղմն² հանդերձ երիվարաւքն խրէին. անդ կատարեալ պսակեր երանելի սեպուհն Դիմաքսենից Մուշ ի Նիխորականայ³: 9 Իսկ Կամսարականն Արշաւիր իջեալ յերիվարէն՝ ի հետիոտս սպանաներ զՎուրկն, զեղբայր Լփնաց թագաւորին, եւ իւր⁴ ի բաց ձգեալ զերիվարն ի սաստիկ խոր տղմոյն, ուր եւ մոյկ մի զերծեալ յոտանէն թաղեալ մնայր անդէն ի մաւրին. եւ ինքն Կամսարականն միամոյկ, տղմաթաթաւ, հանդերձ ամենայն զինուն, հանեալ զերիվարն ի ցամաք՝ անվեհեր քաջաբար Նման թռչնոյ⁵ յերիվարն հեծաներ, եւ զարհուրեցուցեալ զթել իւրոյ կողման թշնամեացն՝ փախստական առնէր: 10 Եւ հայեցեալ տեսանէր զերանելի սպարապետն Յայոց զտերն Մամիկոնեից Վարդան՝ հանդերձ ընկերակցաւքն իւրովք եւ ամենայն Յայոց զնդան, զի արարեալ փախստականս եւ Նոցա՝ ածէին առաջի իւրեանց զբազմութիւն զաւրացն Պարսից. յորոց զկէսն սրովք իւրեանց դիաթաւալս յերկիր կործանէին եւ զկէսն գետա-

1 Ատ. երիս յառաջս

2 Ձ. ի տիղմն

3 ՏՏ. մուշն՝ ի խորականայ. ԲԳտ. ունիւն ծնթ. «զուլցէ ի Նիխորականայ» Ձ. մուշինի խորականայ

4 ՏՏ. չիք իւր

5 ՏՏ. թռչնոց